ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Հայաստանի ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի նախաձեռնությամբ սույն թվականի մարտի 10—12-ը Երևանում անցկացվեց գիտական նստաշրջան, նվիրված ՍՍՌՄ արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերի վերարտադրության և օգտագործման հարցերին։ Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էին էկոնոմիկայի հարցերով զբաղվող Հայաստանի գիտահետազոտական հիմնարկների, բուհերի, պետպլանի, արտադրական ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև Մոսկվայի, Լենինգրադի, Մինսկի, Թբիլիսիի, Ալմա-Աթայի, Տաշքենդի, Նովոսիբիրսկի և Միության այլ քաղաքների ներկայացուցիչներ։ Զեկուցումների տեքստերը նախօրոք բազմացվել և ուղարկվել էին մասնակիցներին։ Դա հնարավորություն տվեց, առանց զեկուցումները կարդալու, անցնել ակտիվ քննարկմանը։

Վերջին յոթնամյակի տարիներին ՍՍՌՄ արդյունաբերության հիմնական ֆոնդերը կրկնապատկվեցին։ Դրա հետ մեկտեղ գործող հիմնական ֆոնդերի զգալի մասը նորացվեց։ Սակայն հիմնական ֆոնդերի այդպիսի տեմպերով աճը չի ուղեկցվել դրանց ռացիոնալ օգտագործմամբ, իջել է ֆոնդահատույցը, որի հետևանքով, արտադրության զարգացման բարձր տեմպեր ապահովելու համար, հարկ է եղել ավելացնել ազգային եկամտի կուտակվող մասը։ Ահա թե ինչու ՍՄԿՊ Կենտկոմի սեպտեմբերյան (1965 թ.) պլենումը և ՍՄԿՊ XXIII համագումարը հատուկ ուշադրություն նվիրեցին հիմնական ֆոնդերի վերարտադրության և ռացիոնալ օգտագործման հարցերին։

Գիտական նստաշրջանի նպատակն էր, ինչպես նշեց իր ներածական խոսքում ՀՍՍՌ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Առաքելյանը, նախ, գիտական լայն հասարակության և պրակտիկ աշխատողների ուշադրությունը բևեռել հիմնական ֆոնդերի վերարտադրության և արդյունավետ օգտագործման հարցերի մշակման վրա, առանձնացնել այն հարցերը, որոնց լուծումը արդի պայմաններում առաջնահերթ խնդիր է։ Երկրորդ, ուժեղացնել տարբեր գիտահետազոտական հաստատությունների համագործակցությունը հիմնական ֆոնդերի վերարտադրության և արդյունավետ օգտագործման կարևոր հարցերի մշակման գործում։ Երրորդ, ազատ, ստեղծագործական բանավեճի միջոցով նպաստել հիմնական ֆոնդերի տեսության զարգացմանը և դրանց վերարտադրության ու օգտագործման արդյունավետության բարձրացման լավագույն ուղիների որոշմանը։

Նստաշրջանում հատուկ ուշադրություն նվիրվեց հիմնական ֆոնդերի վերարտադրության և օգտագործման մերոդոլոգիական ու մեթոդական հարցերին։

Պրոֆ. Մ. Երեևը (Մոսկվա) գտնում է, որ հիմնական ֆոնդերի վերարտադրության պլանավորման հիմնական թերությունն այն է, որ չի գնահատվում աշխատանքի արտադրողականության աճի միջճյուղային արդյունավետությունը։ Տվյալ աշխատանքի տնտեսումը չի համադրվում այլ տեսակի աշխատանքի ծախսումների հետ, որոնք անհրաժեշտ են տվյալ տնտեսումն ստանալու համար։ Ըստ նրա կարծիքի այդ հարցի լուծման կարևոր միջոցը հանդիսանում է հասարակական աշխատանքի արտադրողականության միջճյուղային պլանավորման մեթոդի կիրառումը։ Նա առաջարկում է աշխատանքի տնտեսման և դրան հասնելու համար անհրաժեշտ ծախսումների համադրության միջոցով գտնել յուրաքանչյուր ճյուղի «զուտ տնտեսումը» և դրանց համադրման միջոցով որոշել հասարակական արտադրության մեջ աշխատանքի օպտիմալ տնտեսման չափը։

Պրոֆ. Բ. Սմեխովը (Մոսկվա) նույնպես գտնում է, որ հիմնական ֆոնդերի վերարտադրության արդյունավետության որոշումը չի կարելի անջատել ամբողջ ժողովրդական տնտեսության մասշտաբով արդյունավետության հաշվումներից, ուստի անհրաժեշտ է արագացնել բազմաճյուղային հաշվումների մեթոդոլոգիայի, մասնավորապես ճյուղերի միջև կապիտալ ներդրումների օպտիմալ բաշխման մեթոդների մշակումը։ Ըստ նրա, կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի արդյունավետության չափանիշը, վերջին հաշվով հանդիսանում է ժողովրդի կենսամակարդակի բարձրացման աստիճանը։ Ճյուղային հաշվումների համար այդ չափանիշը դրսևորվում է արտադրանքի արժեքի առավել իջեցման ձևով։

Տնտեսագիտության թեկնածու Ա. Իսդևոսյանը սկզբունքորեն առարկեց կապիտալ ներդրումների և արտադրական ֆոնդերի արդյունավետությունը ժողովրդի կենսամակարդակի բարձրացման չափանիշով գնահատելու տեսակետի դեմ, որը, նրա կարծիքով, պրոբլեմի լուծումը փոխադրում է արտադրության բնագավառից՝ բաշխման ու սպառման բնագավառը։ Ներդրումների և ֆոնդերի էֆեկտն արտահայտվում է հասարակական արդյունքի աճով ու արժեքի իջեցմամբ և չափվում է ազգային եկամտի աճով։ Բնակչության կենսամակարդակի բարձրացումը պետք է չափանիշ ծառայի ամբողջ ժողովրդական տնտեսության էֆեկտիվության գնահատման համար։

Մտքերի աշխույժ փոխանակություն ծավալվեց կապիտալ ներդրումների բացարձակ և համեմատական էֆեկտիվության փոխհարաբերության հարցի շուրջը։ Բ. Սմեխովն այն կարծիքին է, որ կապիտալ ներդրումների բացարձակ էֆեկտիվությունը, արդյունավետությունը չափազանց ընդհանուր ձևով բնորոշ ցուցանիշ է, որն ավելի փոքր ճշտություն ունի, քան ժողովրդական տնտեսության զարգացման արդյունավետության գնահատման այժմ կիրառվող ցուցանիշների ամբողջությունը։ Այդ պատճառով նա նպատակահարմար է համարում բացարձակ էֆեկտիվության ցուցանիշի օգտագործումը պլանների մշակման միայն ամենաառաջին փուլում, երբ որոշվում են կապիտալ ներդրումների ճյուղային լիմիտները։

Բ. Սմեխովը կասկածի տակ է առնում բացարձակ և համեմատական էֆեկտիվության սահմանազատման նպատակահարմարությունը։ Այդպիսի հարցադրումը տնտեսագիտության թեկնածու Վ. Վորոտիլովը (Լենինգրադ) ճիշտ չի համարում։ Ըստ նրա, բացարձակ էֆեկտիվության ցուցանիշն օգտագործվում է կապիտալ ներդրումների արդյունավետությունն ըստ առանձին օբյեկտների որոշելու համար, իսկ համեմատական էֆեկտիվության ցուցանիշը տվյալ միջոցառման հնարավոր տարբերակներից ամենանպատակահարմարն ընտրելու համար։

Տեխնիկական գիտությունների թեկնածու Բ. Եղիազարյանը գտնում է, որ եթե համադրենք նույն միջոցառման երկու տարբերակների բացարձակ էֆեկտիվությունը, հաշվի առնելով նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների հաշվեկշիռը, որոշ ձևափոխություններից հետո կստացվի նպատակահարմար տարբերակի՝ ըստ համեմատական էֆեկտիվության ցուցանիշի ընտրելու պայմանը։ Դա ապացուցում է, որ բացարձակ և համեմատական էֆեկտիվության ցուցանիշների միջև հակասություն չկա, տնտեսապես ձեռնտու տարբերակի ընտրությունն այդ ցուցանիշների միջոցով նույնն է։

Նստաշրջանում բանավեճ ծավալվեց արտադրական կարողությունների որոշման մեթոդի շուրջը։ Պրոֆ. Լ. Իտինի (Մոսկվա) կարծիքով, արտադրական կարողությունը մի մեծություն է, որը բնորոշում է ձեռնարկության հիմնական ֆոնդերի աշխատանքն իդեալական պայմաններում, երբ հնարավոր է լրիվ իրացնել արտադրամիջոցների պոտենցիալ հնարավորությունները։ Որպես կարողության ցուցանիշ, նա առաջարկում է ընդունել սարքավորումների արտադրողականությունը բնական արտահայտությամբ, հիմք ընդունելով ինչպես տեղակայված, այնպես էլ չտեղակայված սարքավորումները և թողարկվող արտադրանքի օպտիմալ անվանացանկը։

Նույն տեսակետն են պաշտպանում նաև պրոֆ. Ս. Կամենիցերը (Մոսկվա) և տեխնիկական գիտությունների թեկնածու Լ. Վարդանյանը։ Տնտեսագիտության թեկնածու Ա. Ջրաղացպանյանը համաձայն չէ արտադրական կարողությունների որոշման Լ. Իտինի առաջարկած մեթոդին։ Ըստ նրա, արտադրամիջոցների պոտենցիալ հնարավորությունները աշխատուժի շնորհիվ արտադրության պրոցեսում աճման տենդենց են ցուցաբերում։ Այդ տենդենցն ավելի ուժեղ է արտահայտվում այնտեղ, ուր բարձր է աշխատուժի որակավորումը և աշխատանքի ու արտադրության կազմակերպման մակարդակը։ Այդ պատճառով, կադրերի որակավորումը բարձրացնելու և նոր կադրեր պատրաստելու վրա, հատկապես նոր շարք մտնող ձեռնարկությունների համար, միջոցներ չպետք է խնայել։

Զեկուցումներում և ելույթներում շարադրվեցին մեթոդական այլ հարցեր։ Օրինակ, Լ. Վարդանյանն առաջարկում է մերենաշինական ձեռնարկություններում սարքավորումների օգտագործման աստիճանը որոշելու ցուցանիշների սիստեմ, տնտեսագիտության թեկնածու Հ. Խաչատրյանը առաջարկում է նոր արտադրանքի թողարկման հետ կապված հիմնական ֆոնդերի փոփոխության որոշման մեթոդիկա, պրոֆ. Լ. Կանտորը (Լենինգրադ)՝ հիմնական ֆոնդերի ծառայության ժամկետների որոշման մեթոդիկա, տեխնիկական գիտությունների թեկնածու Լ. Զիլինգարյանը՝ ռեսուրսների կոմպլեքս օգտագործման ժամանակ ծախսերի բաշխման մեթոդիկա և այլն։

Գիտական նստաշրջանի քննարկման կենտրոնական հարցերից մեկը դարձավ ֆոնդահատույցի փոփոխման օրինաչափությունը սոցիալիզմի պայմաններում։ Ակադեմիկոս Ա. Առաքելյանը գրտնում է, որ սոցիալիստական արտադրության պայմաններում ֆոնդահատույցի անընդհատ աճը օրինաչափություն է, քանի որ տեխնիկական առաջադիմության շնորհիվ շարք են մտնում առավել կատարելագործված աշխատամիջոցներ, և միջոցառումներ են ձեռնարկվում դրանց օգտագործումը բարելավելու ուղղությամբ (աշխատողների որակավորման բարձրացում, արտադրության կազմակերպման բարելավում և այլն)։ Վերջին տարիների ընթացքում ֆոնդահատույցի նվազումը նա բացատրում է հիմնականում արտադրական կարողությունների համամասնությունների խախտման, գործարկված կարողությունների յուրացման ժամկետների ձգձգման և այլ սուբյեկտիվ գործոններով։ Ֆոնդահատույցի նվազման վրա, բացի սուբյեկտիվ գործոններից, աղդել են նաև ա-

ռավել ֆոնդատար ճյուղերի արագ զարգացումը, արտադրության տեղաշարժը դեպի Արևելք, աշխատօրվա կրճատումը և այլն։

Նույն տեսակետը պաշտպանեցին տնտեսագիտության թեկնածուներ Ա. Կոլոսովը (Մոսկվա), Ա. Վորոբյովան (Մոսկվա) և Կ. Վերմիշևը։ Այդ հարցում այլ տեսակետ է պաշտպանում Բ. Սմեխովը։ Ըստ նրա, 1959—1963 թվականներին ֆոնդահատույցի նվազումը պայմանավորված է այն բանով, որ հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացումը պահանջում էր արտադրանքի ֆոնդատարության մեծացում։ Այդ պատճառով ֆոնդահատույցի նվազումը տվյալ շրջանում օրինաչափ էր։ Սակայն այդ օրինաչափությունը չի կարելի տարածել հաջորդ ժամանակաշրջանի վրա։

Պրոֆ. Ա. Նոտկինը (Մոսկվա) և պրոֆ. Ա. Պետրովը (Մոսկվա) հիմնական ֆոնդերի արդյունավետության բարձրացման կարևոր ցուցանիշը համարում են ոչ թե ֆոնդահատույցի, այլ հասարակական աշխատանքի արտադրողականության աճը։ Այդ տեսանկյունից, ըստ նրանց, ֆոնդահատույցի նվազումը մեր առաջընթացի համար որոշիչ նշանակություն չունի, եթե աշխատանքի արտադրողականությունն աճում է և ծախսերը հատուցվում են։ Դրա հետ միասին, նրանք նշեցին հիմնական ֆոնդերի օգտագործումը բարելավելու կարևոր նշանակությունը։

Գիտական նստաշրջանը լուրջ ուշադրություն նվիրեց սոցիալիստական արտադրության արդյունավետության բարձրացման ուղիների բացահայտմանը։ Առաջին պլանի վրա մղվեց ժողովրդական տնտեսության բոլոր օղակների համամասնական զարգացման հարցը։ Ակադեմիկոս Ա. Առաքելյանը կանգ առավ մի շարք կարևոր համամասնությունների վրա և փաստական նյութերով ցույց տվեց դրանց խախտման բացասական ազդեցությունը հիմնական ֆոնդերի արդյունավետության վրա։ Ֆոնդահատույցի ցածր մակարդակն, առաջին հերթին, պայմանավորված է հիմնական և օժանդակ արտադրամասերի միջև անհրաժեշտ համամասնության բացակայությամբ։ Օժանդակ արտադրամասերի տեխնիկական հագեցվածության և մեքենայացման մակարդակը հիմնական արտադրամասերի համեմատությամբ զգալիորեն ցածր է։

Ֆոնդահատույցի մեծացման գործում բացառիկ նշանակություն ունի սարքավորումների և շենքերի ու կառուցումների միջև ճիշտ համամասնությունների ապահովումը։ Այլ հավասար պայմաններում, հիմնական ֆոնդերի ակտիվ մասի առավել արագ աճը ապահովում է ֆոնդահատույցի մեծացում։

Ֆոնդահատույցի բարձրացման մյուս կարևոր պայմանը ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի, ինչպես նաև արտադրության ու սպառման միջև ճիշտ համամասնությունների ապահովումն է։

Ներկա պայմաններում, երբ արտադրությունը հագեցված է առաջավոր տեխնիկայով, ֆոնդահատույցի բարձրացման համար կարևոր նշանակություն է ստանում որակյալ աշխատուժի և սարքավորումների միջև որոշակի համապատասխանության ստեղծումը։ Բանվորների մեծ մասնությունը և աշխատանքային փորձը հնարավոր են դարձնում լիովին օգտագործել արտադրամիջոցների կարողությունները, կարողության միավորի հաշվով ստանալ մեծ արդյունք։ Բարձրորակ կադրերի առկայությունը նպաստում է գործարկվող կարողությունների յուրացման ժամկետները նվազագույնի հասցնելուն։

Տնտեսագիտության թեկնածուներ Պ. Բորբովսկին (Մոսկվա), Ֆ. Բուդնիցկին (Մոսկվա), Ֆ. Դրոնովը (Մինսկ), Տ. Աշիմբաևը (Ալմա-Աթա) և ուրիշները պաշտպանեցին հիմնական ֆոնդերի արդյունավետության բարձրացման համար արտադրության բոլոր օղակներում ճիշտ համամասնությունների ապահովման անհրաժեշտությունը և կանգ առան արտադրության կոնկրետ ճյուղերում դրանց ապահովման ուղիների վրա։ Այս հարցի շուրջը հանդես եկող ընկերները գտնում են, որ հիմնական ֆոնդերի առանձին մասերի վերարտադրության միջև փոխադարձ կապը, դրանց միջև ճիշտ համամասնությունները կարելի է ապահովել պլանավորման բալանսային մեթոդի միջոցով, կիրառելով նաև հիմնական ֆոնդերի վերարտադրության ճյուղային կառուցվածքի վերլուծություն։

Ինչպես նշվեց գիտական նստաշրջանում, հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետությունը շատ բանով կախված է նաև դրանց ստեղծման հետ կապված աշխատանքների ճիշտ կազմակերպումից։ Գաղտնիք չէ, որ ֆոնդահատույցի փոքրացման գործում զգալի դեր ունեն նաև հիմնական ֆոնդերի նախագծման, կառուցման և սարքավորումների տեղակայման աշխատանքներում եղած թերությունները։

Բ. Եղիազարյանը շոշափեց նախագծային և շինարարական կազմակերպությունների նյութական շահագրգռվածության և պատասխանատվության հարցերը։ Նա առաջարկեց տնտեսական սանկցիաներ կիրառել այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք կառույցները ժամանակին

չեն ապահովում նախագծային և նախահաշվային փաստաթղթերով։ Սանկցիայի չափը, նրա կարծիքով, պետք է սահմանվի համեմատական այն վնասին, որը ստացվում է նախագծային փաստաթղթերը ուշ հանձնելուց։ Նպատակահարմար է սահմանել սանկցիայի նվազագույն չափը։ Նախագծերը անթերի ընդունելու համար անհրաժեշտ է բարձրացնել էքսպերտների նյութական շահագրգռվածությունը։ Այդ նպատակով կարելի է սահմանել պարգևատրություն էքսպերտների ռացիոնալ առաջարկությունների համար։

Ըստ գործող կարգի նախագծային կազմակերպությունները պարգևատրվում էին օբյեկտի նախահաշվային արժեքի լժանացման և արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար։ Սակայն Բ. Եղիազարյանի կարծիքով այդպիսի անջատ պարգևատրումը արդարացված չէ, քանի որ հաճախ շինարարության ոչ մեծ թանկացումը կարող է ապահովել արտադրանքի ինքնարժեքի զգալի իջեցում։ Նա առաջարկում է, որպես նախագծի որակի ցուցանիշ օգտագործել կապիտալ ներդրումների շահութաբերության ցուցանիշը, որի մեջ սինթեզվում են ինչպես օբյեկտի արժեքը, այնպես էլ արտադրանքի ծավալն ու ինքնարժեքը։ Այդ դեպքում նախագծային կազմակերպության նյութական խթանման չափը կարելի է որոշել համեմատելով նախագծում ստացվող արդյունավետությունը նախօրոք սահմանված նորմատիվի հետ։ Նպատակահարմար է պարգևատրման մի զգալի մասը նախագծային կազմակերպությանը տալ օբյեկտի կառուցումից հետո։

Պրոֆ. Ս. Կամենիցերը առաջարկում է նախագիծը հանձնելիս նախագծային կազմակերպությանը վճարել դրա արժեքի մի մասը, իսկ մյուս մասը օբյեկտի կառուցումից հետո։ Եթե նախագծի անճշտությունների հետևանքով լրացուցիչ ծախսեր են պահանջվում, ապա այդ չափով պետք է պակասեցվի նախագծի երկրորդ վճարումը։ Ֆ. Դրոնովը առաջ քաշեց շինարարական օբյեկտների կառուցման ամբողջ ժամանակաշրջանում անընդհատ ֆինանսավորման սիստեմին անցնելու հարցը։

Նստաշրջանում կարողությունների յուրացման անթույլատրելի ձգձգումների և դրանց վերացման հարցին հանգամանորեն անդրադարձավ Ի. Բունդնիցկին։ Նա նշեց, որ արտադրական կարողությունների յուրացումից է՛լ ավելի դանդաղ է ընթանում նոր ձեռնարկություններում տնտեսական ցուցանիշների՝ աշխատանքի արտադրողականության և արտադրանքի ինքնարժեքի նախագծային մակարդակին հասնելու գործը։ Նոր ձեռնարկությունների արագ յուրացմանը նպաստող կարևոր պայմաններից մեկը կոմպլեքսայնության և փոխադարձ համապատասխանության սկզբունքի կիրառումն է տնտեսական գործունեության բոլոր փուլերում (պլանավորում և տեղաբաշխում, նախագծում, կառուցում, գործարկում և շահագործում)։ Ի. Բունդնիցկին առաջարկում է նոր ձեռնարկությունների պլանների և հաշվետվության մեջ նախատեսել արտադրական կարողությունների, աշխատանքի արտադրողականության և արտադրանքի ինքնարժեքի նախագծային մակարդակին հասնելու ցուցանիշներ, ինչպես նաև, հնարավորության չափ շուտ հաստատել և պրակտիկայում կիրառել նախագծային կարողությունների յուրացման ժամկետների նորմատիվները։

Հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման և ֆոնդահատույցի մեծացման հսկայական ռեզերվներ են թաքնված հիմնական ֆոնդերի բուն օգտագործման պրոցեսում։ Զեկուցումների և ելույթների մեծ մասում հարուստ փաստական նյութերով ցույց տրվեցին այդ ասպարեզում տեղ գտած թերությունները և դրանց վերացման հնարավոր ուղիները։

Ս. Բարայանը Հայկական ՍՍՌ մերենաշինական ձեռնարկությունների օրինակով ցույց տվեց, որ հերթափոխայնության ավելացումը կարող է ոչ մեծ կապիտալ ներդրումներով ապահովել արտադրանքի զգալի աճ, հասարակական աշխատանքի արտադրողականության և ֆոնդահատույցի մեծացում, ինչպես նաև աշխատունակ բնակչության դրաղվածության մակարդակի բարձրացում։

Սարքավորման առայժմ դեռ սուր պահանջի պայմաններում շատ կառույցներում և ձեռնարկություններում կա մեծ քանակությամբ չտեղակայված և տվյալ ձեռնարկության համար ավելորդ սարքավորում։ Ավելորդ սարքավորման իրացման գործը լավ հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ է, ինչպես առաջարկեց տնտեսագիտության թեկնածու Կ. Արդուլանան (Ֆրունզե), երկրում կազմակերպել մշտական և լայն ինֆորմացիա ավելորդ սարքավորման մասին։

Վ. Վորոտիլովի և Ա. Հարությունյանի զեկուցումներում բերված գծային ծրագրավորման մեթոդների օգնությամբ կազմված մոդելները հնարավորություն են տալիս որոշել սարքավորման օպտիմալ ծանրաբեռնվածությունը, հայտնաբերել արտադրության նեղ տեղերը և ավելորդ սարքավորումը, կատարել դրանց նպատակահարմար վերաբաշխում ձեռնարկությունների և արտադրամասի միջև։ Ռ. Պետուխովը (Նովոսիբիրսկ) կիրառելով դինամիկ մոդելավորման մեթոդը, առաջարկում է էքսկավատորների օպտիմալ վերարտադրության պլան, հաշվի առնելով նաև հարակից ճյուղերի պահանջվող զարգացումը։

Պրոֆ. Ա. Հովսեփյանը նշեց, որ մաթեմատիկական մեթոդների և հաշվողական տեխնիկայի կիրառումը տնտեսագիտության մեջ արդյունավետ կարող է լինել միայն այն դեպքում, եթե նախօրոք սահմանվի օգտագործվող մեծությունների տնտեսագիտական էությունը և հիմնավորվի դրանց միջև եղած քանակական կապերը։

Գիտական նստաշրջանում նշվեցին հիմնական ֆոնդերի օգտագործման բարելավման և հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման շատ այլ ուղիներ, ինչպես, օրինակ, ֆոնդահատույցի ցուցանիշի նորմավորումը (Ա. Առաքելյան), աշխատանքի գիտական կազմակերպման մեթոդների կիրառումը (Լ. Ֆեդորիշչևա), տնտեսական շրջանի կոմպլեքս զարգացումը (Տ. Աշիմբաև), սարքավորման մոդեռնացումը (Մ. Իմանալիև), նոր տեխնիկայի ներդրման խթանումը (Ա. Իմանբեկով), մետաղի կորուստների կրճատումը (Մ. Կասյան), սեզոնային բնույթ ունեցող արտադրություններում կոմբինացման միջոցով սեզոնայնության մեղմացումը (Ն. Սանտալաձե), սարքավորման վերանորոգման բազայի զարգացումը և կենտրոնացումը (Կ. Աբդուլյաևա, Ա. Տեր-Իսրաելյան), արտադրության կենտրոնացումը (Ռ. Ռախիմով) և մասնագիտացումը (Ե. Նիստեր) և այլն։

Նստաշրջանում քննարկված հարցերի վերաբերյալ ընդունվեցին ծավալուն հանձնարարականներ։

Բ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆ